ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Արատտա 1 ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/142 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	Մետաղյա հիմքով դեկորատիվ նստարան՝ պատրաստված մետաղական թիթեղից և խեժափիճի (լիստվինիցա) տախտակից: Արտաքին չափսերը՝ լայնություն 740մմ, երկարություն 1800մմ , բարձրություն 840մմ : Նստարանը պետք է ունենա գետնին ամրացման համար նախատեսված անցքեր, որոնք պետք է լինեն հավելյալ կոշտացված : Նստարանի հիմնական կրող կարկասը պետք է լինի պատրաստված 8 մմ հաստությամբ թիթեղից՝ մշակված լազերային կտրման մեթոդով ,իսկ նստատեղի ամրացման բազան 4 մմ թիթեղից՝ համաձայն գծագրի: Կրող կարկասի՝ R=50մմ անկյունները պետք է ստացվեն ճկման եղանակով համապատասխան գծագրի և ամբողջական էլեմենտի ճշտությունը պետք է բավարարի +- 3 մմ ին:բ Տեռասային տախտակը մետաղական բազային ամրացվում է դրա համար նախատեսված հեղյուսների և սիլիկոնի միջոցով: Նստատեղի տախտակը պետք է լինի քողարկված եզրային մասում : Նստարանի մետաղը պետք է լինի ծածկված բարձրորակ պոլիէբոկսիտային փոշեներկով՝համապատասխան գործող նորմերին : Նստարանի եռակցումը իրականացնել ներսի միջավայրում և մաքրել ձեռքի հղկման մեթոդով: Նյութերը որից պատրաստված է նստարանը պետք է լինեն նոր և չօգտագործված: Գետնից նստատեղի բարձրությունը 450մմ: Գետնից ձեռնահենակի բարձրությունը 620մմ: Նստատեղի և հենատեղի միացման հատվածը կորացումով: Փայտյա սուր հատվածները կլորացված: Նշված տեխնիկական բնութագիրը և գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Նստարանները մատակարարվում են հավաքված վիճակում, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթով: Արտադրողը պարտավոր է կատարել սպասարկում 1 տարի ժամանակով (գարնանը, ամռանը, աշնանը՝ 3 անգամ): Թարմացնել գույները, անհրաժեշտության դեպքում

	ամբողջությամբ ներկել: Փայտյա մասերը բնակլիմայական պայմանների ազդեցությունից առաջացած թերությունների դեպքում վերականգնել լաքապատված մակերեսը: Տեղափոխումն և տեղադրումը կատարվում է մատակարարի միջոցների հաշվին: Ըստ պատվիրատուի ներկայացրած հասցեների: Պատվիրատուի պահանջով (քաղաքային միջոցառումների, համերգների ժամանակ) կատարողը պարտավոր է իր միջոցների հաշվին ժամանակավորապես ապամոնտաժել տվյալ տարածքի նստարանները, տեղափոխել իր մոտ և ավարտից հետո նորից տեղադրել նույն տեղում: Տեղադրումն իրականացնել վարչական շրջանի համապատասխան ստորաբաժանման որևէ աշխատակցի ներկայությամբ, տեղադրումն իրականացնելուց հետո պատվիրատուին ներկայացնել տեղադրված գույքի լուսանկարը՝ թղթային կամ էլեկտրոնային տարբերակով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Аратта 1 в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/142 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	